Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ *Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ*

Առարկա՝ *Դասվար*

Թեմա՝ *Կարծրատիպեր: Գենդերային դերերը տարրական դպրոցում:*

Վերապատրաստող, մենթոր՝ *Ն. Բաղդասարյան*

Ուսուցիչ՝ *Լ. Մկրտչյան*

ՎԱՆԱՁՈՐ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 . Ի՞նչ է կարծրատիպը: Գենդերային կարծրատիպեր 6

Գլուխ 2. Գենդերային դերերի ներկայացվածության հաճախականությունը 9

2.1. Գենդերային դերերը դասագրքերում 9

2.2. Մասնագիտական դերերը դասագրքերում 15

2.3. Ընտանեկան դերերը դասագրքերում 17

Հետազոտական աշխատանքի վերլուծություն 20

Եզրակացություն 30

Գրականության ցանկ 33

Ներածություն

«Աղջիկն օժտված է իր կյանքում առաջ գնալու կարողությամբ: Նա միայն մայր չէ, նա միայն քույր չէ, նա միայն կին չէ: Նա պետք է ունենա ինքնություն: Նրան պետք է ընդունեն, և նա պետք է ունենա տղային հավասար իրավունքներ»:

Մալալա Յուսաֆզայ՝ կանանց իրավունքների ակտիվիստ, երեխաների հարցերով զբաղվող ակտիվիստ, Խաղաղության Նոբելյան մրցանակի 2014 թվականի հաղթող

Գենդերային հավասարություն նշանակում է երկու սեռերի հավասար տեսանելիություն, իրավազորում, պատասխանատվություն և մասնակցություն հանրային ու մասնավոր կյանքի բոլոր բնագավառներում: Գենդերային հավասարության հասնելն ունի կենտրոնական դեր մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության գործարկման, օրենքի գերակայության նկատմամբ՝ հարգանքի և տնտեսական աճի ու մրցունակության համար:[1]

Գենդերային խտրականություն ասելով՝ հասկանում ենք «սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը» (ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1979):[2]

Մենք ապրում ենք մի երկրում, որն իր տարածքով շատ փոքր է, բայց իր կարծրատիպերով՝ շատ տարբեր: Մեզ համար կարևոր է պահել ազգայինը, ավանդականը, բայց վերջիններիս մեջ արմատացած է «կարծրատիպ» կոչվածը: Կարծրատիպերը կարծր պատկերացումներ են ինչ-որ երևույթների նկատմամբ, որոնք շատ դժվար են փոխվում: Հենց այս ամենի արդյունքում էլ մեծամասամբ ձևավորվում է գենդերային հավասարություն կամ անհավասարութուն:

Լեզվամտածողության ու հասարակական գիտակցության մեջ փոփոխություններ կատարելու ճանապարհին, իհարկե, անհատական մակարդակում փոփոխություններ

կատարելն է: Կանանց ու տղամարդկանց շրջանում գենդերային հավասար լեզվամտածողության ու խոսքի քարոզչությունը կարող է իր ազդեցությունն ունենալ նաև նրանց վարքի վրա:

Կրթության համակարգը դեռևս չի հաղորդում գենդերայնորեն հավասարակշռված դերային սպասումները և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց հավասարության իդեալները: Դասագրքերում կան գենդերային կարծրատիպեր բովանդակող նյութեր և նկարներ, և հաշվի չի առնվում դրանց ազդեցությունը սովորողների անհատականության ձևավորման վրա, դրանք չեն նպաստում հավասար գենդերային մշակույթի ձևավորմանը: Մեծ է դասագրքերի և մանկավարժների դերը տարրական դպրոցի աշակերտների մեջ ցանկալի արժեքներ սերմանելու առումով: Մանկավարժների վերաբերմունքն ու մոտեցումը սովորողների նկատմամբ պակաս կարևոր գործոն չէ սեռերի սոցիալական դերերի ընկալման մեջ:

Դպրոցական դասագրքերը երեխաների առաջին մշակութային փորձն են, իսկ դրանցում պատկերված մասնագիտական և սոցիալական պատկերները ձևավորում են արտաքին աշխարհի մասին նրանց առաջին պատկերացումները:

Հետազոտության ընթացքում քննարկվում են ինչպես դասագրքերում գենդերային դերերի ներկայացվածության համամասնությունները, այնպես էլ նրանց անհամաչափ ներկայացմանը նպաստող գործոնները՝ նորմատիվային չափորոշիչների բացակայության կամ նոր ներդրման հարցը, դպրոցական միջավայրի, հատկապես ուսուցիչների ունեցած հնարավոր ազդեցության հարցը, դասագրքաստեղծ գործընթացում մասնակցող բոլոր օղակների ունեցած ազդեցությունն ու ներդրումը:

Հետևաբար կարևոր նշանակություն ունի դպրոցական դասագրքերում ներկայացված գենդերային դերերի ուսումնասիրությունը, ինչպես նաև դպրոցական միջավայրի ազդեցությունը այս ամենի ձևավորման համար: Սա էլ հանդիսանում է այս հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակը: ՀՀ տարրական դպրոցի դասագրքերում ներկայացված արական և իգական սոցիալական դերերի վերհանումն է, այնտեղ առկա պատկերների, հատկանիշների փոխանցման առանձնահատկությունների և հիմնական ուղիների ներկայացումը: Որպես հետազոտության նպատակ դիտարկելով

նաև դասագրքերում ներկայացված նյութի փոխանցման առանձնահատկությունների ուսումնասիրումը՝ հետազոտության մեջ ներառվել է այդ գործընթացի հիմնական դերակատարների՝ ուսուցիչների գենդերային պատկերացումների վերլուծությունը, ինչպես նաև աշակերտների մոտ ձևավորված մոտեցումները:

Հետազոտության խնդիրները: ՀՀ դպրոցական միջավայրում, տարրական դպրոցի դասագրքերում՝

- Գենդերային կարծրատիպերի դրսևորման հաճախականության
- Ընտանեկան դերերի և պարտականությունների բաշխվածության
- Արական և իգական սոցիալական դերերի
- Արական և իգական մասնագիտությունների
- •Արական և իգական հատկանիշների ներկայացվածության վերհանումը, բացահայտումը և վերլուծությունը:

Հետազոտության առարկան: Որպես հետազոտության առարկա ընտրվել են Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում ներկայացված գենդերային դերերը, քանի որ տարրական դպրոցը համարվում է անձի սոցիալիզացիայի առաջնային օղակներից մեկը և այստեղ ստացած գիտելիքները, սոցիալական փորձն առաջնային են, հետագայում կարող են կայունանալ, ամրապնդվել և վերարտադրվել:

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցի տարրական դասարանների դասագրքերի գենդերային վերլուծության, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների շրջանում իրականացրած հարցումների հիման վրա:

ԳԼՈՒԽ 1. Ի՞նչ է կարծրատիպը: Գենդերային կարծրատիպեր

Կարծրատիպ (հին հունարեն՝ στερεός «կարծր» + τύπος «տիպ»), մարդու կողմից ինչ-որ երևույթի՝ նախկինում ձևավորված մտավոր գնահատական, որը կարող է արտացոլվել համապատասխան *կարծրատիպային վարքագծում*:[3]

Գենդերային կարծրատիպերը մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն, ընդհանրացված պատկերացումներ են կանանց և տղամարդկանց և, համապատասխանաբար, նրանց վարքի վերաբերյալ: Դրանք վաղ են յուրացվում, ավելի վաղ, քան երևան է գալիս սեփական կարծիքը, և դառնում են չգիտակցված գաղափարախոսություն:

Գենդերային կարծրատիպերն ունեն հետևյալ առանձնահատկությունները.

- Դրանք շատ կայուն են, վաղ են յուրացվում և մեծ դժվարությամբ են փոփոխվում:
- Սոցիալական են և հարաբերակցվում են հասարակության իրական շերտադասմանը. տվյալ հասարակության տարբեր սոցիալական շերտեր կարող են 11 ունենալ տարբեր կարծրատիպեր՝ պայմանավորված ազգային առանձնահատկություններով, կենսապայմաններով, տարիքով, կրթությամբ:
- Կան ընդհանրական գենդերային կարծրատիպեր, որոնք բնորոշ են տարբեր աշխարհագրություն ունեցող գրեթե բոլոր հասարակություններին, ինչպես նաև միևնույն հասարակության մեջ տարբեր սոցիալական խմբերի: Օրինակ՝ գրեթե բոլոր հասարակություններում «տղամարդ» հասկացության հետ են կապում ուժը, իշխանությունը, տոկունությունը, անկախությունը, ազատությունը, հարձակվողականությունը, հանդգնությունը, կոպտությունը, իսկ «կին» հասկացության հետ՝ թուլությունը, զիջողականությունը, ընտանիքասիրությունը, առաքինությունը,հավատարմությունը,կրավորականությունը,հոգատարությունը, ամաչկոտությունը, բնազդայնությունը:[2]

Կարծրատիպերի համակարգերը կարող են ծառայել որպես մեր անձնական ավանդույթի հիմք, հասարակության մեջ մեր դիրքը պաշտպանելու միջոց: Դրանք աշխարհի համակարգված, քիչ թե շատ հակասական պատկերներն են: Այն հարմարավետորեն ընդգրկում է մեր սովորությունները, նախասիրությունները, կարողությունները, հաճույքները և հույսերը: Աշխարհի կարծրատիպային պատկերը

կարող է թերի լինել, բայց դա այն հավանական աշխարհի պատկերն է, որին մենք հարմարվել ենք: Այս աշխարհում մարդիկ ու առարկաները զբաղեցնում են իրենց համար նախատեսված տեղերը և գործում են սպասելի ձևով: Մենք աշխարհում մեզ զգում շատ հարմարավետ, մենք դրա բաղկացուցիչ մասն ենք:[3]

Գենդերային կարծրատիպերը տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կայուն պատկերացումներն են տղամարդկանց և կանանց վերաբերյալ: Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են: Գենդերային կարծրատիպերը գործում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակում:[4]

ՀՀ-ում օրենքով սահմանվում է «գենդերային կարծրատիպերը» հետևյալ ձևակերպմամբ՝ «գենդերային կարծրատիպերը կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներն են: Այսինքն՝ գենդերային կարծրատիպը ընդհանրացված կամ կանխակալ պատկերացումներ են այն հատկանիշների կամ դերերի վերաբերյալ, որոնց պետք է համապատասխանեն կանայք և տղամարդիկ, տվյալ ժամանակահատվածում և հասարակարգում՝ զուտ իրենց սեռի պատճառով: Հետևաբար «կարծրատիպային վերաբերմունքի դրսևորման» կամ «կարծրատիպացման» դեպքում անհատին են վերագրվում հատուկ բնորոշիչներ, հատկանիշներ կամ դերեր միայն այն պատճառով, որ նա այս կամ այն սոցիալական խմբի անդամ է (օրինակ կին է, տղամարդ է, քրիստոնյա է, մահմեդական, հայ և այլն):

Կարծրատիպացման կարելի է հանդիպել կյանքի ցանկացած փուլում՝ ընտանիքից մինչև դպրոց ու աշխատավայր: Ինչպես նշել է Իրավաբանների միջազգային կոմիտեն. «…գենդերային կարծրատիպերը կամ ենթադրությունները իրենց բնույթով պարտադրորեն վնասակար չեն: Սակայն երբ այդ կարծրատիպերն ու ենթադրությունները ծառայում են որպես մարդու իրավունքների խախտման բացատրություն ու արդարացում, և հատկապես օրենքներում, քաղաքականություններում ու, իհարկե, դատական պրակտիկայում, ապա սնում և խրախուսում են գենդերային բռնությունն ու անհավասարությունը»: [5]

Գենդերային կարծրատիպերն ընդհանրացված կամ կանխակալ գաղափարներ են,

որոնց համաձայն անհատները դասակարգվում են գենդերային կոնկրետ խմբերի, որոնք սովորաբար սահմանվում են որպես «կանայք» և «տղամարդիկ», ինչպես նաև կամայականորեն վերագրված բնութագրեր ու դերեր են՝ որոշված եև սահմանափակված նրանց սեռով: Կարծրատիպերը համարվում են և՛ նկարագրական այն առումով, որ որոշակի խմբի անդամներ ընկալվում են որպես միևնույն հատկանիշներով օժտված անձինք՝ անկախ անհատական տարբերություններից, և՛ նորմատիվային այն առումով, որ դրանցով սահմանվում են հարաչափեր այն ամենի համար, ինչը հասարակությունը համարում է ընդունելի վարքագիծ: Կարծրատիպավորումը դառնում է խնդրահարույց, երբ այն օգտագործվում է որպես կանանց նվաստացնելու և նրանց նկատմամբ խտրականություն դրսևորելու գործիք: Գենդերային բացասական կարծրատիպերը վերացնելն էական նշանակություն ունի գենդերային հավասարության հասնելու համար, և մանկավարժները կենտրոնական դեր են խաղում այս փոփոխությունը խթանելու հարցում:[1]

ԳԼՈՒԽ 2. Գենդերային դերերի ներկայացվածության հաճախականությունը

2.1. Գենդերային դերերը դասագրքերում

Գենդերային սխեմատիկ տեսության (Gender Schema Theory) համաձայն երեխաները յուրացնում են իրենց հասարակության մշակութային սահմանումները, որոնք բացատրում են իգականությունն ու արականությունը: Այս ամենում բովանդակության միջոցով փոխանցվող տեղեկատվությունը մեծ դերակատարություն ունի: Իհարկե սեռանույնականացման վրա ազդող գործոնները շատ են, սակայն ֆորմալ կրթությունը վաղ սոցիալիզացման գործում ունի գերակշիռ դերակատարում: Այդ ամենում էլ մեծ տեղ է զբաղեցնում դասագիրքը: Քաղաքականություն ձևավորողների, կրթության պատասխանատուների, մանկավարժների գենդերային հարցերի մակերեսային իմացությամբ պայմանավորված իրավիճակը ավելի խորքային ու թաքնված ռիսկեր ու խոչընդոտներ է պարունակում: Ցավոք սրտի մանկավարժական կրթության բովանդակությունը պատշաճ տեղ չի հատկացնում այս խնդիրների քննարկմանը, դրանց տեսական հենքի յուրացմանն ու հետազոտությունների իրականացմանը: Այս ամենում անհերքելի փոխկապակցվածություն ունեն նաև դասագրքերն իրենց բովանդակությամբ, մասնավորապես փոխանցվող արժեքներով, կարծրատիպերով, վարքագծային նորմերով և դերային բաժանումներով:[6]

Տարրական դպրոցի դասագրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա է գենդերային դերերի ներկայացվածության խիստ անհամաչափություն, ավելին՝ արական դերերի գերակշռում իգականի նկատմամբ, որոնք բացի զուտ պատկերներ և տեքստ ներկայացնելուց, միևնույն ժամանակ ներկայացնում են նաև մասնագիտական, սոցիալական դերեր, հատկանիշներ: Աշակերտը, ամեն օր շփվելով դասագրքի հետ ակամա ընկալում և յուրացնում է այդ պատկերների ու տեքստերի թաքնված կոդերը:

Դասագրքի անվանումը և հեղինակը	**Գենդերային դերերի ներկայացվածությունը նկարներում**		**Գենդերային դերերի ներկայացվածությունը տեքստում**	
	Իգ.	Ար.	Իգ.	Ար.

Այբբենարան/ Վ. Սարգսյան	109	262	77	118
Այբբենարան/ Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան	105	96	83	90
Մայրենի -1/Վ. Սարգսյան	75	176	82	96
Մայրենի-1/ Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան	32	34	131	92
Մայրենի-2/Վ. Սարգսյան	111	238	234	228
Մայրենի-3/Վ. Սարգսյան	34	310	131	173
Մայրենի-4/Վ. Սարգսյան	39	234		
Մայրենի-4/Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան	27	68	148	93
Մաթեմատիկա 1/1 /Ս. Մկրտչյան	37	67	0	0
Մաթեմատիկա 1/2 /Ս. Մկրտչյան	69	55	64	82
Մաթեմատիկա 2 /Ս. Մկրտչյան	174	114	259	193
Մաթեմատիկա 3 /Ս. Մկրտչյան	84	94	226	379
Մաթեմատիկա 4 /Ս. Մկրտչյան	47	52	77	124
Մաթեմատիկա 1/1 /Վ. Հովհաննիսյան…	28	30	10	5
Ես և շրջակա աշխարհը -2/ Թորոսյան,Ալեքսանյան	74	138	50	61
Ես և շրջակա աշխարհը - 3/ Թորոսյան, Ալեքսանյան	35	80	28	61
Ես և շրջակա աշխարհը-4/ Ա. Հովսեփյան	26	65	4	57
Ես և շրջակա աշխարհը - 4 /Թորոսյան, Ալեքսանյան	30	143	20	165
Կերպարվեստ-3/Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	25	21	9	7

Կերպարվեստ-4/Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	24	36	13	12
Տեխնոլոգիա-2/Ս. Հովսեփյան...	0	0	0	0
Տեխնոլոգիա-3/Ս. Հովսեփյան...	2	2	0	0
Տեխնոլոգիա-4/Ս. Հովսեփյան...	0	0	0	0
Երաժշտություն -2/Յուզբաշյան, Փահլևանյան	26	34	9	39
Երաժշտություն -3/Յուզբաշյան, Փահլևանյան	42	42	-	-
Երաժշտություն -4/Յուզբաշյան, Փահլևանյան	16	28	-	-
Ֆիզկուլտուրա-2/Առաքելյան..	90	268	-	-
Ֆիզկուլտուրա-3/Առաքելյան..	185	211	2	12

(Աղյուսակ 1 [1])

Սովորողների մոտ անընդհատ արական պատկերների և դերերի գերակշռումը իգականի հանդեպ ոչ միայն չի կարող նպաստել հանդուրժող հասարակական մշակույթի ձևավորմանը, այլև ստեղծում է խտրական վերաբերմունք, ինչն իր հերթին դժվարություններ և բարդություններ է առաջացնում սեռերի հավասար հնարավորությունների և իրավունքների հարթությունում:[7]

Տարրական դպրոցի դասագրքերում արական և իգական դերերը ներկայացվում են հատուկ ձևերով՝ հագուստ, սանրվածք, հատուկ անուն, կամ սոցիալական դերերով: Տղաները ներկայացվում են տաբատով, կարճ սանրվածքով, սպորտային գլխարկով, իսկ աղջիկները՝ զգեստով կամ կիսաշրջազգեստով, երկար մազերով՝ ժապավենով հավաքված, հյուսված կամ թափված:

Արական կերպարները հիմնականում ներկայացվում են տաբատով, կոստյումով, ակնոցով, բեղերով, պապիկները՝ նաև խալաթով, հողաթափերով, ալեմորուս, լայնեզր գլխարկով, ըստ մասնագիտական դերերի՝ համապատասխան հագուստով: Իգական կերպարները ներկայացվում են հիմնականում շրջազգեստով կամ կիսաշրջազգեստով, բայց շատ հազվադեպ տաբատով, երկար մազերի սանրվածքով, իսկ տատիկները սովորաբար պատկերվում են կարծես «անմարմին», շատ ծեր են,

սպիտակ մազերով, որոնք փնջով հավաքված են, երկար շրջազգեստով՝ ուսերին բրդե թիկնոցով և ակնոցով: Կարևոր է նշել, որ նշված «ծեր» պատկերները արդեն չեն համապատասխանում արդի հասարակական իրողություններին և պատկերացումներին, քանի որ հիմնականում տարրական դպրոց հաճախող սովորողերի պապիկներն ու տատիկները տարեց են, բայց ոչ՝ ծեր: Հատկապես տարրական դպրոցի մաթեմատիկայի, ինչպես նաև մայրենիի դասագրքերում շատ սակավ են ներկայացված ընտանեկան դերեր՝ հայրիկ, մայրիկ, տատիկ, պապիկ, եղբայր, քույր, ինչպես նաև երեխաները ներկայացվում են հատուկ անունով՝ Այգ, Արա, Անի, Աննա և այլն: Դասագրքերում գերակշռում են ներսեռային խմբային դերերը՝ գործողությունները հաճախ տեղի են ունենում միևնույն սեռի ներկայացուցիչների շրջանակներում: Խնդիր ավելի հաճախ ներկայացված է մաթեմատիկայի դասագրքրեում, որտեղ տարբեր առաջադրանքների հերոսները հաճախ նույն սեռի ներկայացուցիչներ են, օրինակ «Հայկը պապիկից փոքր է 10,իսկ հայրիկից՝ 5 անգամ…» կամ «Երբ Լալան հարցրեց տատիկի տարիքը, տատիկն ասաց, որ. . .» և այլն (Մաթեմատիկա 3): Դասագրքերում արական դերերը հիմանականում ներկայացված են հանրային դաշտում, իսկ իգական դերերը՝ մասնավոր, ընտանեկան հարթությունում:

Առհասարակ կանացի հատկանիշների ներկայացումը տնային գործերի, հատկապես կերակուր պատրաստելուն երբեմն ներկայացվում է նաև չափազանցված և քննարկման խնդրից դուրս: Որպես օրինակ Ֆիզկական կուլտուրա 2 դասագրքում «Պահպանիր առողջությունդ» թեմայի շրջանակներում ներկայացած է օրվա ռեժիմը՝ «Անկողնուց վե՛ր կաց, վարժություններ կատարի՛ր, անկողինդ հավաքի՛ր, նախաճաշի՛ր, ուղևորվի՛ր դպրոց, տուն դարձի՛ր, ճաշի՛ր, չմոռանաք հանգստանալ, բակ իջնել ընկերներով, ձմռան օրերին խաղալ դահուկներով, սահնակներով, չմուշկներով»՝ այս բոլոր նկարներում պատկերված են տղաներ, մինչդեռ «Ճաշի ժամն է, շտապիր լվացվելու և ճաշակելու մայրիկի պատրաստած համեղ ուտեստները, դասագիրքդ վերցրու, ժամը եկավ սովորելու և օրն ավարտվեց, կարող եմ հանգիստ քնել գործողությունները ներկայացված են իգական դերերով և նկարներով (Նկ. 1): Այս առումով փոփոխություններ կան Ֆիզիկական կուլտուրա 3 և 4 դասագրքերում:



(Նկար 1-Ֆիզկուլտուրա 2)

Արական և իգական զբաղմունքները հստակ տարանջատվում են հատկապես մաթեմատիկայի դասագրքերում, որտեղ խնդիրների սահմանափակ բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ տղաները հիմնականում ներգրավված են այնպիսի զբաղմունքներում, ինչպիսիք են շինարարությունը, մետաղալարով իրերի պատրաստումը, ոչ մթերային գնումները, դրամային հարցերը, իսկ աղջիկները՝ տորթ են թխում, ճաշ պատրաստում, գուլպա գործում, ժապավեն, ուլունք, ծաղիկներ, մթերք գնում և այլն:

Դասագրքերում հստակ ցուցվում են արական և իգական հատկանիշներ, երբ որպես արական ներկայացվում են ուժեղ, ֆիզիկական ուժ ենթադրող, կամային հատկանիշներ ցուցադրող կերպարները, մինչդեռ որպես իգական հատկանիշներ են ներկայացվում քնքշությունը, մեղմությունը, լալկանությունը, համեստությունը և այլն: Միաժամանակ հանրայնորեն չգնատահատված որոշ արարքներ կարծես թույլատրելի, ներելի և անգամ բնական են դիտվում տղաների համար, և ընդհակառակը՝ չեն քննարկվում աղջիկների պարագայում: Դասագրքրերում ներկայացված բոլոր հերոսները՝ պատմական, առասպելական, հեքիաթների, պատմությունների, բացառապես արական սեռի են: Անգամ Հայաստանի Հանրապետության ներկայացումը հեղինակները իրականացնում են բացառապես տղամարդ հերոսների տեսքով՝ անտեսելով գոնե ժամանակակից կին հերոսներին՝ սպորտի չեմպիոններ և այլն (Նկ. 2) :



(Նկար 2-Ես և շրջակա աշխարհը)

2.2.Մասնագիտական դերերը դասագրքերում

Դասագրքերում մասնագիտական դերերի ներկայացումը խիստ կարևոր խնդիր է, քանի որ այդպիսով սկզբնավորվում է մասնագիտական կողմնորոշման խնդիրը ու դրա ուղղությամբ հմտությունների ձեռք բերման գործընթացը: Իսկ առհասարակ մասնագիտական կողմնորոշման խնդիրը շատ կարևոր է աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության և պետական սոցիալական քաղաքականության տեսանկյունից՝ հաշվի առնելով զբաղվածության հիմնախնդիրը: Բավականին խտրական են՝ ցուցելով արական և իգական մասնագիտություններ: Դասագրքերում, և առհասարակ կրթական քաղաքականության ոլորտում մասնագիտական հնարավորությունների, ընտրության սահմանափակումը ըստ էության սահմանափակում է ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց ապագա հնարավորությունները՝ ուրվագծելով կնոջը և տղամարդուն հարիր մասնագիտական դերեր:

Դասագրքերում տղամարդիկ հիմնականում ներկայացված են որպես հասարակությունում բարձր պաշտոն ունեցողներ, մինչ կանայք այդ առումով սահմանափակ դերակատարություն ունեն, (Munawar, 2004): Տղամարդկանց համար նախատեսված է գործունեության ավելի լայն շրջանակ: Նրանց աշխատանքը հիմնականում ենթադրում է այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝ ինտելեկտը, երևակայությունը, կազմակերպչական և խնդիրները լուծելու ունակությունը, իսկ կանանց աշխատանքը ենթադրում է դաստիարակչական կամ սպասարկման հետ կապված գործունեությունը, (Munawar, 2004): Տղամարդիկ դասագրքերում ունեն հիմնականում հետևյալ մասնագիտությունները կամ աշխատանքը՝ բժիշկ, ինժեներ, ֆերմեր, փոստատար և այլն, (Munawar, 2004):[6]

Տարրական դպրոցի դասագրքերում ներկայացված «իգական» մասնագիտություններից են ուսուցչուհի, պարուհի, վաճառողուհի, հացթուխ, դերձակ, տնային տնտեսուհի, հազվադեպ՝ բժշկուհի: Մինչդեռ «լուրջ, կարևոր տղամարդկային» մասնագիտությունների և զբաղմունքների ցանկն ավելի մեծ է՝ վարորդ, մարզիկ, ոստիկան, նկարիչ, օդաչու, տանկիստ, զինվոր, շինարար, հյուսն, քանդակագործ, դարբին, տիեզերագնաց, աստղագետ և այլն (նկ. 3):

Գենդերային անհավասարակշռություն է ստեղծվել հանրակրթական դպրոցների ուսուցչական կազմում, որում տղամարդ ուսուցիչներն ընդամենը 15,8% են կազմում: Տղամարդկանց և կանանց անհավասարակշռված ներկայացվածությունը չի նպաստում գենդերային դրական պատկերացումների ձևավորմանը:[8]

Դեռևս «Տեխնոլոգիա-1» աշխատանքային տետրում պատկերված նկարում ներկայացված են թվով վեց մասնագետներ, որոնցի միայն մեկն է կին. պատշար, կենսաբան/բուսաբան, ինժեներ, զոդող, հյուսն տղամարդիկ և կար անող կին (նկ. 5) ֆիզկուլտուրայի դասագրքերում ուսուցիչը պատկերված է տղամարդու կերպարով (օրինակ՝ Ֆիզկուլտուրա-3, պայմանական նշան՝ տղամարդ ֆիզկուլտուրայի ուսուցիչ-մարզիչ) (նկ. 4) :

(Նկար 3-Մայրենի 3)



(Նկար 4-Ֆիզկուլտուրա 3)

(Նկար 5-Տեխնոլոգիա 1)

2.3. Ընտանեկան դերերը դասագրքերում

«Ընտանիքը բնության հրաշալիքներից մեկն է»։

Ջորջ Սանտայանա

«Ընտանեկան կյանքում պետք է հաշվի առնել միմյանց մտքերը, համոզմունքները, զգացմունքները, սիրելի մարդու ձգտումները։ Պահպանելով սեփական արժանապատվությունը՝ պետք է կարողանալ զիջել միմյանց»։

Վասիլի Սուխոմլինսկի

Ընտանիքը և դպրոցը սերտորեն կապակցված են երեխայի ներաշխարհի հետ և ենթադրում են, որ պետք է լինի ընտանիքի և դպրոցի գծապատկերած գենդերային դերերի նույնականացում և միաձուլում, (Brugeiles, 2009):[6]

Ընտանիքն ամենահին սոցիալական ինստիտուտն է, այն առաջացել է ավելի վաղ, քան կայսրությունները, հանրապետությունները, բանակը, կրթությունը, շուկան:[9]

Ընտանիքն ամուսնությամբ կամ ազգակցական կապով միավորված մարդկանց սոցիալական փոքր խումբ է. ունի պատմականորեն ձևավորված կառուցվածք, անդամների կենցաղավարության ընդհանրություն՝ փոխադարձ օգնությամբ ու բարոյական պատասխանատվությամբ: Ընտանիքը սերնդի վերարտադրության հիմնական բջիջն է: [10]

Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից։ Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է, որը կարող է աստիճանակարգային լինել։ Այստեղ կա լիդեր (երբեմն, մեծ ընտանիքներում, մեկից ավելի), կան ենթականեր (կատարողներ), յուրաքանչյուր անդամ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր կարգավիճակը և համապատասխան դերերը։ Որոշ ընտանիքներում լինում է միայն մեկ լիդեր, որը կարող է լինել ավտորիտար կամ ժողովրդավար անձնավորություն։ Բայց այժմ մեծաթիվ են կոչվում այսպես կոչված էգալիտար (հավասարության վրա հիմնված) ընտանիքները, որի անդամները (առնվազն ամուսինները) հավասար կամ գրեթե հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն։[3]

Տարրական դպրոցի դասագրքերում առավել հաճախ և քննարկվող թեմաներից է «Ընտանիք» կամ «Իմ ընտանիքը» թեմաները: Հանրակրթական պետական

չափորոշչում կրթության բովանդակության արժեքային բաղադրիչ բաժնում ներկայացված է կրթության արդյունքը՝ անձ և քաղաքացի, ով ի թիվս այլ հարցադրումների պետք է գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

Որպես տարրական դպրոցում ամենահաճախ քննարկվող, միևնույն ժամանակ գենդերային դերերի տեսանկյունից ամենահաճախ ներկայացվող հարթություն, պետք է նշել, որ այստեղ ևս գենդերային և սոցիալական դերերի խիստ անհամաչափ ներկայացում է դրսևորվում: Որպես օրինակ դասագրքերում ներկայացված են լիարժեք և մեծ կազմով ընտանիքների «իդեալական» պատկերներ, ինչը լրացուցիչ բարդություններ է առաջացնում ոչ լիարժեք ընտանիքների երեխաների սոցիալիզացիայի և հարմարվողական մեխանիզմների մշակման առումով:

Առհասարակ, տարրական դպրոցի բոլոր դասագրքերում կինը ներկայացվում է առավելապես տնային հոգսերի շրջանակում: Այս մոտեցումը ավելի քան խտացված ներկայացված է դասագրքրերում հանդիպող ընտանեկան պատկերներում՝ ի դեմս «մայրիկի» կերպարի:

Ընդ որում «երջանիկ ընտանեկան» պատկերներում ընտանիքի անդամները բացառապես հանդես են գալիս առանձին դերերում՝ ցուցելով կանացի և տղամարդկային զբաղմունքների հստակ շրջանակը. շյուղերով գործող տատիկ, հեռուստացույց դիտող պապիկ, մայրիկը աղջկան դաս է սովորեցնում, հայրիկը բազմոցին թիկնած թերթ է կարդում կամ աղջիկը տիկնիկով է խաղում, տղան՝ գնդակով, սրով և այլն: Ընտանեկան իրավիճակներ ներկայացնող տեքստերում կամ նկարներում գերակշռում են ներսեռային, ներխմբային գործողությունները կամ դերերը և պարտականությունները բաշխված են ըստ առանձին կերպարների: Գրեթե բացակայում են միևնույն գործողության մեջ ներգրավված ծնողների մասին նյութերը կամ նկարները: Հայրերը հիմնականում ներկայանում են կամ ընտանեկան «լուսանկարներում» երեխան գրկած մոր կողքին, կամ թերթ կարդալիս, կամ ընտանեկան ժամանցի դեպքում տղամարդկային խմբերում, կամ աշխատանքից վերադառնալուց հետո ընտանիքի անդամներին որևէ նվեր, իր, մթերք

առաջարկելով:[7]

Ներկայացված ընտանեկան դերերում մայրիկը որպես կանոն ներկայացվում է գեղեցիկ, ջերմ, քնքուշ, սիրառատ, հոգատար հատկանիշներով, իսկ հայրիկները՝ խելացի, բարդ իրավիճակներում կողմնորոշվող, լուծումներ գտնող, առաջնորդող, որոշումներ ընդունող, ուժեղ կերպարում: Որպես հիմնական զբաղմունք գրեթե բոլոր դասագրքերում նշվում է մայրիկների ճաշ պատրաստելու պարտականության մասին, իսկ աղջիկներն էլ հաճախ իրենց գործողություններում ընդամենը ընդօրինակում և վերարտադրում էին կանացի- մայրական դերերը:

Դասագրքերում ներկայացված մայրիկները նաև բացառապես հոգ են տանում երեխաների կրթության, առողջության համար՝ դասերն են սովորեցնում, սոցիալական շփման հմտություններ փոխանցում, հիվանդության ժամանակ խնամում: Այսօրինակ տեսարաններում որևէ կերպ կամ որևէ դերում հանդես չեն գալիս ընտանիքի այլ անդամներ, հատկապես՝ հայրերը: Օրինակ՝ Կերպարվեստ-3 դասագրքում «Իմ ընտանիքը» թեմայի շրջանակներում ներկայացված է «Երբ դպրոցում ավարտում ես դասերը, շտապ ուզում ես տուն գնալ, որովհետև մայրիկդ, հայրիկդ, քույրիկդ կամ եղբայրդ, տատիկդ կամ պապիկդ քեզ են սպասում: Չէ, որ դա քո ընտանիքն է», մինչդեռ թեմային կից իլյուստրացիոն նկարներում պատկերված են մայրերի և երեխաների պատկերող նկարներ (Էդգար Դեգա «Բելիլիների ընտանիքը», Աշոտ Մելքոնյան «Ընտանիք», Օգյուստ Ռենուար՝ «Տիկին Շարպենտերն ու իր երեխաները»-Կերպարվեստ 3, էջ 44) (նկ. 6, 7):

(Նկար 6-Կերպարվեստ 3)

(Նկար 7-Կերպարվեստ 3)

Հետազոտական աշխատանքի վերլուծություն

Հետազոտությունը ցույց տվեց, որ ՀՀ տարրական դպրոցի գրեթե բոլոր դասագրքերում առկա է գենդերային դերերի անհամաչափ ներկայացվածություն՝ արական դերերի գերակշռությամբ: Դասագրքերում իգական դերերը հիմնականում քննարկվում են սահմանափակ մասնավոր, ներընտանեկան շրջանակներում՝ կենցաղային հոգսեր, պարտականություններ, երեխաների խնամք, կերակուր պատրաստել և այլն: Արական դերերը ավել բազմազան են և առնչվում են հանրային ոլորտին: Տղաները սովորաբար ներկայանում են տարբեր ակտիվ, ստեղծագործական իրավիճակներում, խաղերում, որպես կանոն երկխոսությունների, լուծումներ գտնելու հարցում նախաձեռնողներ են, որոշում ընդունողներ:

Դասագրքերում ներկայացված բոլոր հերոսները՝ առասպելաբանական, պատմական, հեքիաթային, քաղաքական, պատվածքներ և այլն, արական սեռի ներկայացուցիչներ են:

Դասագրքերում ներկայացված ընտանեկան դերերի վերլուծությունը ցույց տվեց, որ դարձյալ ներկայացված են անհամաչափ դերակատարումներ՝ դասագրքերի ընդհանուր արական դերերի ներկայացվածության պայմաններում ընտանեկան պատկերներում գերակշռում են իգական, հատկապես մոր կերպարները: Հոր կերպարը կամ խիստ հազվադեպ է ներկայացված ընտանեկան դիմապատկերում, կամ ընդհանրապես բացակայում է:

Դասագրքերում ներկայացված մասնագիտական դերերը կրկնօրինակում են կամ վերստեղծում են մասնագիտությունների գենդերային բաժանման պատկերը: Ուսուցչի կերպարը դասագրքերում ներկայացված է բացառապես իգական դերով, մինչդեռ շատ այլ մասնագիտություններ՝ բժիշկ, նկարիչ, շինարար, գիտնական, օդաչու, մարզիչ, քանդակագործ, ոստիկան, ներկայացված են արական կերպարներով:

Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, պետական կառավարման ոլորտներում նկատվում է տղամարդկանց խիտ գերակշռություն, մինչդեռ, պարզվում է, որ կանայք էլ ակտիվ են սպասարկման ոլորտում, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում, տնային տնտեսության

վարման ծառայություններում, ինչպես նաև կրթության ոլորտում՝ ապահովելով այդ ոլորտի զբաղվածության 80%-ը:

Դասագրքերում ներկայացված հեղինակային նյութերի վերլուծությունը ցույց է տալիս գենդերային խիստ անհամամասնություն. բոլոր դասագրքերում հիմնականում ներկայացված են տղամարդ ստեղծագործողների նյութերը: Դասագրքերի հեղինակները, որպես կանոն, գենդերային հարցերի հետ կապված վերարտադրում են ընհանուր հանրային մշակույթը և վերաբերմունքը:

Ինչ վերաբերվում է դասագրքաստեղծ հեղինակային խմբի գենդերային կազմի վերլուծությանը, նշենք, որ այս հանգամանքը այնքան էլ որոշիչ չէ դասագրքի գենդերային հանդուրժողականության համատեքստում: Որպես օրինակ կարելի է ներկայացնել Անժել Քյուրքչյանի, Լիլիթ տեր-Գրիգորյանի, նկարիչ Սուսաննա Այվազյանի «Այբբենարան» դասագիրքը, որի հեղինակային խումբ բացառապես իգական է, սակայն դասագրքում, եթե անգամ գենդերային դերերի ներկայացման հաճախականության տեսանկյունից պահպանված է քիչ թե շատ համամասնություն, ապա դասագրքի նյութերի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ դրանք նույնքան խտրական են, և միևնույն ժամանակ հստակորեն վերարտադրում են հասարակական գենդերային և սոցիալական դերերի մասին պատկերացումներն ու կարծրատիպերը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ դասագրքերի հեղինակային խմբերում առավելապես նկարիչների ազդեցությամբ է նաև պայմանավորված արտաքինից գենդերայնորեն «չեզոք» այս դերերի արական ներկայացումը: Առավել հաճախ «Այբբենարան» և «Մայրենի» դասագրքերում չեզոք տեքստերին կից ներկայացվում էին նկարներ, իլյուստրացիաներ, որտեղ տեքստում ներկայացված չեզոք սեռը միանգամից դառնում էր արական կամ իգական՝ պայմանավորելով տվյալ երևույթի, մասնագիտության, իրավիճակի արական կամ իգական հատկանիշները: Այս կոնտեքստում, սակայն, ամենացայտուն օրինակը Մայրենի 1-ում (հեղինակ՝ Վ. Սարգսյան) ներկայացված Ս. Կապուտիկյանի «Կարծում եք, թե կատա՞կ է» բանաստեղծությունը և դրան կից հարցերն ու պատկերներն են:



ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ԹԵ ԿԱՏԱ՞Կ Է

Սիլվա Կապուտիկյան

Այսօր ուրիշ է կարգը.
Ե՛ս եմ մաքրել հատակը:
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ արիք,
Սենյակ ինչո՞ւ ոտք դրիք:
Տեղերումդ քարացե՛ք,
Նորից շարժվել չփորձե՛ք:
Ձուր չխմե՛ք,
Կկաթի:
Հաց-մաց չուտե՛ք,
Կթափվի:
Լուսամուտը չբացե՛ք,
Փոշի կգա, իմացե՛ք:
Ոչ ոք ուժեղ չշնչի,
Թե չէ փայլը կկորչի:
Ի՞նչ է, մաքրել հատակը,
Կարծում եք, թե կատա՞կ է...

Հարցեր

1. Ինչո՞ւ է փոքրիկ աղջիկը դարձել մաքրասեր ու պահանջկոտ:

3 Առաջին տառը

Փոխելով ջուր բառի առաջին տառը՝ ստացի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ հուր, դուր:

Բանաստեղծության մեջ կոնկրետ չի նշվում, թե ով է մաքրել հատակը, մինչդեռ կից նկարում հստակ երևում է, որ դա արել է աղջիկը, իսկ տեքստին հաջորդող հարցերն էլ ուղղակիորեն ցուցում են հատակ մաքրելու իգականության մասին. Օրինակ՝

Հարց 1՝ Ինչու՞ է փոքրիկ աղջիկ դարձել մաքրասեր ու պահանջկոտ:

Հարց 2՝ Դու օգնու՞մ ես մայրիկիդ, ինչպե՞ս:

Համարվում է, ու ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների հանդեպ կարող է ազդել ինչպես նրանց առաջադիմության, այնպես էլ վարքի և արժեքների ձևավորման վրա: Այս առումով կարևորվում է հատկապես ուսուցիչների ազդեցությունը սովորողների գենդերային պատկերացումների և վարքի ձևավորման ու զարգացման վրա: Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում, պարզվեց, որ գրեթե բոլոր հարցման ենթարկված ուսուցիչները պնդում էին, որ իրենք տղաների և աղջիկների հանդեպ դրսևորում են հավասար վերաբերմունք: Այնուամենայնիվ առանձին հարցադրումներով պարզվեց, որ տղաների ու աղջիկների նկատմամբ դրսևորվում են տարբերակված վերաբերմունք և մոտեցումներ, որոնք հիմնականում պայմանավորված են ուսուցիչների անձնական արժեքային և գենդերային պատկերացումներով, ինչն էլ հիմնականում համապատասխանում է ընդհանուր հասարակական ընկալումներին ու պատկերացումներին:

Ուսուցիչների շրջանում իրականացրած երկու հարցումների հիման վրա ունենք հետևյալ արդյունքները:

Պատկերացումները գենդերային կարծրատիպերի, խտրականության մասին:

https://forms.gle/Wh82iADs7vSgQgxN8 (Հարցաշար 1)

Բոլոր ուսուցիչները նախ պատասխանել էին այն հարցին, թե ինչ է գենդերային հավասարությունը: Ստորև ներկայացնում ենք վերլուծության արդյունքում ստացված հետևյալ հարցերի պատասխանները:

- ✓ Կանաց և տղամարդկանց իրավունքների հավասարություն:
- ✓ Խտրականության վերացում
- ✓ Երկու սեռերի միջև հավասար իրավունքներ և խտրական վերաբերմունքի բացակայություն
- ✓ Երբ սեռով պայմանավորված տարբերակում չկա
- ✓ Իրավական հավասարություն է երկու սեռերի միջև՝ տարբեր բնագավառներում:
- ✓ Տղամարդկանց և կանանց անհավասար հնարավորությունները հասարակության մեջ
- ✓ Գենդերային հավասարություն այն է, երբ կանանց և տղամարդկանց միջև չկան տարբերություններ, ունեն հավասար իրավունքներ հասարակության մեջ
- ✓ Նշանակում է երկու սեռերի հավասար պատասխանատվություն և մասնակցություն հանրային կյանքի բոլոր բնագավառներում
- ✓ Տղամարդու և կնոջ իրավահավասարություն
- ✓ Երկու տարբեր սեռերի տեսանելիություն, հավասարություն
- ✓ Ըստ իս, երբ տարբերակում չես դնում սեռերի միջև, ցանկացած հարցում հավասարություն դրսևորել տղա-աղջիկ հարաբերություններում
- ✓ Իրավական և սոցիալական հավասարություն կանանց և տղամարդկանց միջև
- ✓ Երկու սեռերի հավասարություն
- ✓ Կնոջ և տղամարդու իրավունքների պարտականությունների հավասարություն
- ✓ Տղամարդու և կնոջ հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություն

Վերլուծության արդյունքում ստացված մնացած հարցերի պատասխանները կներկայացնենք դիագրամների տեսքով:

Ձեր կարծիքով, կա՞ արդյոք մեր հասարակության մեջ անհավասարություն կանանց և տղամարդկանց միջև:



Դպրոցում հանդիպե՞լ եք գենդերային անհավասարության խնդրին:



Արդյո՞ք դասագրքերում արական և իգական դերերը համաչափ են ներկայացված:



Համաձա՞յն եք այս մտքի հետ. աղջիկները բնագիտական առարկաներից ավելի թույլ են:



Կրթական միջավայրում և գործընթացներում հաշվի՞ եք առնում սովորողի գենդերային առանձնահատկությունները:



Ես գիտակցում եմ, որ կրթական համակարգում սովորողների նկատմամբ հանդիպող գենդերային կարծրատիպերն ու խտրական վերաբերմունքը կարող են հանգեցնել գենդերային անհավասարության:



Ես նկատում եմ դասագրքերում խիստ ընդգծված գենդերային ավանդական նորմերն ու դերերը:



Դասապլան մշակելիս և դասարան մտնելիս արդյո՞ք հաշվիեք առնում աղջիկ և տղա սովորողների առանձնահատկություններն ու տարբեր կարիքները:



Թե՛ իգական, թե՛ արական սովորողներին արդյո՞ք տրվում են հավասար հնարավորություններ ու պայմաններ՝ դասարանում և դպրոցում լիդերական պաշտոններ զբաղեցնելու համար:



Դպրոցական միջավայրում գենդերային կարծրատիպերի հետազոտություն:

https://forms.gle/tTfFgPCFgWTkJATr (Հարցաշար 2)

Ես գովաբանում, խրախուսում և օգնում եմ ավելի հաճախ աղջիկներին, քան տղաներին:



Ես, որպես կանոն, ավելի պահանջկոտ եմ աղջիկների, քան տղաների նկատմամբ:



Ես սովորաբար հաճելիորեն զարմանում եմ, երբ տղաները ճիշտ պատասխան են տալիս հարցերին կամ առաջադրանքին:



Ես սովորաբար տղաներին եմ հանձնարարում ներկայացնել և /կամ առաջնորդել խմբային աշխատանքը:



Ես ավելի հաճախ հարցեր ուղղում եմ տղաներին, քան աղջիկներին:



Սովորաբար դասարանում իրերը տեղաշարժել կամ ինչ-որ բան բերել (օրինակ՝ ուսուցչանոցից) խնդրում եմ տղաներին:



Սովորաբար ես աղջիկներին եմ խնդրում կարգի բերել դասարանը, գրատախտակը մաքրել և այլն:



Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցիչները ևս հաճախ իրենց անձնական արժեհամակարգով, գենդերային մշակույթով կարող են ստեղծել կամ վերարտադրել կանացի և տղամարդկային պատկերներ, հատկանիշներ, դերեր: Այս առումով կարևորվում է ուսուցիչների գենդերային կրթության խնդիրը, որը պիտի իրականացվի ինչպես մանկավարժական ուսումնառության, այնպես էլ մասնագիտական հմտությունների և որակավորման բարձրացման դասընթացների ընթացքում:

Աշակերտների շրջանում իրականացրած հարցումների վերլուծության արդյունքում ունեցանք հետևյալ արդյունքները.

https://forms.gle/HT8mzZsb6mYXyJA4A (Հարցաշար 3)

Ո՞վ ես դու:



Տղաներն ավելի ուժեղ են, քան աղջիկները:



Դասագրքերում ավելի շատ հանդիպում ենք տղաների, թե աղջիկների կերպարներ, դերեր:



Ձեր դասարանում ովքե՞ր են ավելի մեծ թիվ կազմում՝ տղաները, թե աղջիկները:



Ովքե՞ր են պատասխանատու դասարանի մաքրության համար:



Ո՞վ կարող է լինել ոստիկան:



Վարորդ կարող է լինել.



Պարով զբաղվում են.



Եզրակացություն

Գենդերային հավասարությունը (կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը) նշանակում է տղամարդու և կնոջ հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ: Գենդերային հավասարությունը չի նշանակում տղամարդկանց և կանանց նույնականացում: Հավասարությունը ենթադրում է, որ կանանց ու տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները չպետք է պայմանավորված լինեն վերջիններիս տղա կամ աղջիկ ծնվելու փաստով:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են մի շարք ազգային գործիքներ գենդերային հավասարություն ապահովելու ուղղությամբ, միաժամանակ Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների հետ կապված, դեռևս առկա է ոչ հավասարակշռված գենդերային մշակույթ, գենդերային դերերի մասին խտրական պատկերացումներ:

Կրթական ծրագրերը, չափորոշիչները, ուսումնամեթոդական նյութերը ստեղծում և վերարտադրում են գենդերային վարքի մոդելներ, դերեր և պատկերներ: Այս առումով առանձնանում է հատկապես դասագրքերի ազդեցությունը, քանի որ սովորողները դասագրքերի հետ ամենօրյա շփման արդյունքում յուրացնում են դրանցում ներկայացված պատկերներն ու հասկացությունները:

Հետազոտության շրջանակում ձևակերպված բոլոր արդյունքների վերլուծության արդյունքում հաստատվեցին:

1. Ուսումնասիրված դասագրքերում և մասնավորապես մայրենիի դեպքում պարզվեց, որ կանայք մեծամասամբ չունեն հանրային մասնագիտական դերեր: Միակ բացառությունը մասնագիտական աշխատանքներն են, որտեղ կանայք հիմնականում ներկայացված են ուսուցչի դերում: Մաթեմատիկայի ուսումնասիրված դասագրքերում բաշխումն ավելի հավասարակշռված էր, սակայն այնտեղ ընդհանուր առմամբ գերակշռում էր չեզոք բովանդակությունը, որը մայրենիի կարծրատիպացնող բովանդակության հետ համադրված կաղապարում է և երեխայի մոտ ձևավորում սահմանափակ նորմավորված վարքագիծ:

2. Ներսեռային խմբավորումները գերակշռում են միջսեռայինին: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մայրենիի ուսումնասիրված դասագրքերում երկու սեռերի դեպքում հաղորդակցական հոսքերի մեծ մասն ըստ տվյալ սեռի նախաձեռնող լինելու փաստի ընթացել է միևնույն սեռի ներկայացուցիչների միջև:

3. Արդյունքները ցույց տվեցին, որ հաղորդակցման նախաձեռնողը և խոսքի բովանդակային մեծ մասը ներկայացված է արական սեռի ներկայացուցչի կողմից: Հաղորդակցման ժամանակ տարբեր սեռերի համագործակցության ընթացքում գլխավոր նախաձեռնողը ավելի շատ լինում է տղամարդը, քան կինը: Գործողություններում որպես կանոն արական սեռն ավելի ներգործուն դերեր ունի, քան իգականը:

4. Լեզվական բառապաշարում կան բայական և ածական խմբերի շեղումներ: Տղաները որպես կանոն պատկերված են գործողություն նախաձեռնողի ակտիվ դերում և ունեն իշխանությունն ու ուժը ներկայացնող առանձնահատկություններ, որոնք նկարագրվում են համապատասխան ածականների միջոցով, մինչդեռ կանանց ու աղջիկների դեպքում պատկերն այլ է: Որոշակի բայեր ու ածականներ, փոխկապակցված լինելով այս կամ այն սեռի հետ, առավել հաճախ հանդիպում են կա՛մ արական, կա՛մ իգական գոյականների հետ զուգադրաբար: Օրինակ՝ արական սեռի ներկայացուցիչների դեպքում դրանք գործողություն առաջացնող բայեր են, ածականները սակավաթիվ են, բայց հստակ որակներ նկարագրող, իսկ իգականի դեպքում՝ կրավորական են, զգացողություն նկարագրող բայեր են կամ էլ արտաքինը նկարագրող ածականներ:

5. ՈՒսումնասիրությունը ցույց տվեց, որ մայրենիի ուսումնասիրված դասագրքերի պատկերներում տղաների ընդգրկվածությունն ավելի շատ է, քան աղջիկներինը: Մաթեմատիկայի դիտարկված դասագրքերում ներկայացվածությունն հավասար էր բաշխված, սակայն պետք է հիշել, որ այդ դասագրքերը սոցիալացման ինտենսիվ փուլում գտնվող անհատի վրա համադրված ներգործություն են ունենում և տարրական դպրոցի բովանդակության որակին ամբողջական մոտեցում պետք է ցուցաբերվի:

Առաջարկություններ

Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու դրանց հիման վրա ձևակերպված եզրահանգումները հաշվի առնելով՝ ներկայացնում ենք մի շարք առաջարկներ։ Կարևոր է՝

- *Դասագրքերում գենդերային կարծրատիպեր պարունակող նյութերի բացառումը,*
- *Տարբեր նյութերի և նկարների գենդերային քանակական համամասնության ապահովումը,*
- *Համագործակցային ընտանեկան դերերի ներկայացումը,*
- *Դասագրքերի միջոցով հասարակական գենդերային մշակույթի բարելավման և կարծրատիպերի վերացման ուղղությամբ երբեմն հասարակական տեսանկյունից հակասական արական և իգական դերերի և պարտականությունների ներկայացումը,*
- *Սեռերի հավասար հնարավորությունների և իրավունքների ապահովումը՝ դասագրքերում ներկայացված մասնագիտական դերերի միջոցով,*
- *Դասագրքերումպայմանական ոչ անձնավորված, այլ սիմվոլիկ նշանների կիրառում։*

Ուսուցիչների համար՝

- *Մանկավարժական որակավորում շնորհող ուսումնական ծրագրերում «Գենդերային կրթության մեթոդիկա» առարկայի պարտադիր ներառում,*
- *Վերապատրաստումների ընթացքում գենդերային իրազեկվածության բարձրացմանն ուղղված հարցադրումներ, կոնկրետ դասավանդման հմտություններ, մեթոդիկայի վերանայում՝ գենդերային տեսանկյունից,*
- *Դասվարների համար նախատեսված համապատասխան ուսումնական ձեռնարկի մշակում,*
- *Արտադասարանային միջոցառումների ծրագրում գենդերային հանդուրժողականությանը, հավասար հնարավորություններին նվիրված միջոցառումների նախատեսում։*

Գրականության ցանկ

1. Եվրոպայի խորհրդի՝ գենդերային հավասարության ռազմավարություն, «Գենդերային կարծրատիպերի և սեռականության դեմ պայքարը կրթության մեջ և դրա միջոցով»

2. «ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»- ԵՐԵՎԱՆ 2020

3. *https://ru.wikipedia.org/*

4. Մելիքսեթյան Ն., «Գենդերային հավասարություն»

5. «Սեռական բռնություն կանանց նկատմամբ. վերացնելով վտանգավոր գենդերային կարծրատիպերը օրենքներում և պրակտիկայում» Իրավաբանների միջազգային կոմիտե, 2015 թ. [Sexual Violence Against Women: Eradicating Harmful Gender Stereotypes and Assumptions in Laws and Practice] International Commission of Jurists, 2015

6. «Գենդերային կարծրատիպայնացումը հանրակրթական դպրոցի մայրենիի և մաթեմատիկայի մաթեմատիկայի դասագրքերում»

7. Ծատուրյան Ռ., «Գենդերային դերերը ՀՀ տարրական դպրոցի դասագրքերում»

8. Հավելված ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 11-ի N5 արձանագրային որոշման «ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

9. https://168.am/2018/04/15/935825.html

10. Հայկական հանրագիտարան